



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԵՂԻՇԵ ԱՐԻԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐՅԱՆ

(1860—1930)



ետրվար ամսին լրանում է երջանկանիշատակ եղիշե պատրիարհ Դուրյանի ծննդյան հարյուրամյակը, իսկ ապրիլին՝ մահվան 30-ամյակը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հայ հոգեւորականության և հավատացյալ հայ ժողովրդին ուղղված 1959 թվականի հուլիսի 10 թվակիր Իր սրբառառ կոնդակով սրտագին հրահանգում էր, Կոստանդնուպոլսի ամենապատիվ Ս. Գարեգին պատրիարհ Խաչատրյանի գլխավորությամբ, հարելյանական պատշաճ հանդիսություններով նշել «Արմաշի Դպրեվանոց նախկին վանահայր և վերատեսուչ, Կոստանդնուպոլսի և Ս. Երուսաղեմի պատրիարհ երջանկանիշատակ Ս. եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի ծննդյան հարյուրամյակը»:

Եղիշե պատրիարհ Դուրյանի կյանքը ուսանելի է և մոնումենտալ, իր ամբողջ գրավորության, պարզության և վեհության մեջ: Դուրյանը եղել է հայ եկեղեցականի փնտոված և սիրված մտատիպարը և ժողովրդի լուսավորության, ծառայության նվիրված վաստակավոր մշակը:

Վեհափառ Հայրապետը գեղեցիկ կերպով է բնութագրել իր կոնդակով Դուրյան սրբազանի վաստակը որպես ՈՒՍՈՒՅԶԻ և ՀՈԴԵՎՈՐԱԿԱՆԻ, մտածողի և բարոյախոսի, հայկաբանի և հայագետի, բանաստեղծի ու գրողի:

«Հոգեւույս Դուրյան սրբազան իր առափնագարը հոգիով, իր բովանդակ կյանքով ու վաստակով, Հայ եկեղեցիի և հայ ժողովր-

դի հանդեպ ունեցած իր խորունկ սիրով և մեծ նվիրումով, աներեւ կանգնած է մեր՝ շնորհներով լեցուն հայրապետներու լուսափառագին մեջ և հավետ կենդանի պիտի մնա առոր ֆաղցր հիշատակը՝ որպես Աստուծո շունչը կրող ընտիր անոր, որպես ֆարգիշ, բանաստեղծ և լեզվաբան, որպես տեսլապաշտ մտածող և մեծ բարոյախոս. «ՄԱՀԱՍՆԱՑՈՒ ՄՆԵԱՆ՝ ԱՆՄԱՀ ԶԻՒՆ ՅԻՇԱՏԱԿ ԵԹՈՂ, ՊԱՏՈՒՆԱՑ ԶՊԱՏԿԵՐՆ, ՊԱՏԿԱՌԵԱՑ Ի ԿՈՉՆԱԿԱՆԷՆ, ՓՈԽԱՆՈՐԻՆԱՑ ԶԻՆԱՆՍ» (Խորենացի):

Արդարև Դուրյան սրբազանը, որպես մարդ և հոգեւորական, որպես նկարագիր և անհատականություն ունենալով մի ամբողջություն է: Նա ժԹ դարի մեր ազգային-եկեղեցական, հասարակական և մշակութային զարթոնքի ամենաինքնատիպ և անկրկնելի մեծություններից մեկն էր:

Դուրյան սրբազանը իր ուսուցչական, հովվական, գրական, բանասիրական մեծ վաստակով, իր առափնագարը և անբասիր կենցաղով և մեր դասական մատենագիրների և եռամեծ վարդապետների տեսլականով, լուսավոր և անմոռանալի հիշատակ է թողել մեր եկեղեցական պատմության նորագույն շրջանում և իր աշակերտների և ծանոթների հիշողության մեջ:

Եղիշե պատրիարհը եղեբարախտ բանաստեղծ Պետրոս Դուրյանի կրտսեր եղբայրն էր, ծնված 1860 թվականի փետրվարի 23-ին (հին տոմարով), Կոստանդնուպոլսի ամենահին, բայց հայկական շնչով հարուստ մեկ թաղի՝ Սկյուտարի մեջ, համեստ հայ երկա-

թագածի ընտանիքում: Դուրյան սրբազանը իր աշխատասիրությամբ և բնատուր ձիրքերով ընտանեկան համեստ հարկից հասել է բարձրագույն դիրքի և գիտցել է այն վերածել լուսավոր առաքելության՝ հայ հավատացյալ ժողովրդի և Հայ եկեղեցու ծառայության անդաստանում:

Հայկական հավատավոր ընտանիքի և սրբության մեջ բողբոջած ու սնած մարդը եղավ նա, ինչ որ հետագայում էլ կազմեց նրա հեղափոխական գեղեցկության և բազմակողմանի առաքիճության աղբյուրը:

Դուրյանի կյանքը և բովանդակ գործունեությունը ամփոփվում են երկու հիմնական և լուսավառ զգեստների մեջ: Նա գերազանց տիպարն է հայ ուսուցչի և անբասիր հայ հոգևորականի: 1876 թվականին նա ասպարեզ իջավ նախ որպես ուսուցիչ՝ Սկյուդարի ճեմարանում: 1878 թվականին Դուրյան սրբազանը ընդմիջտ իր աշխատանքն ու կյանքը կապում է Հայ եկեղեցու ծառայության գործին որպես հոգևորական:

Դուրյան սրբազանը, եկեղեցական կյանքի հետ, հոգևորականի իր սքեմի տակ գուրբերացաբար առաջ է տարել միշտ կրթական գործը: Նրա կյանքը այս երկու ասպարեզներում եղել է ներշնչող ուղեցույց և փառոս: Դուրյանի բովանդակ գործունեության ամենից ավելի հիշատակելի կողմը եղել է միշտ կրթական գործին տված մղումը և հայ նոր հոգևորականության պատրաստության մտահոգությունը:

«Դուրյան սրբազանը, — գրել է Վեհափառ Հայրապետը՝ բնութագրելով հոգևորականն ու ուսուցիչը նրա մեջ, — ԱՎԵԼԻ ՔԱՆ ԿԵՍ ԴԱՐ ՈՒՍԱՎ ԵՎ ՈՒՍՈՒՑ, աղոթեց ու գրեց, դասախոսեց, դաստիարակեց և փառքեց ու իր պաշտոնը փառավորեց սրտեղանդ նվիրումի մը բարի արդյունավորությամբ, «ԳՆՐԱ-ԶԱՆՑՆԱԿ ՔԱՆ ԶԱՄԵՆԱՅՆ, ՈՅՔ ԶԱՅՆՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԷՆ ԱՌԱՔԻՆԻՔ» (Խորենացի):

Դուրյան սրբազանի կենսագիր և նրա արժանավոր աշակերտներից մեկը՝ Քորգով արքեպիսկոպոս Դուրյանյանը, Դուրյանի փառանշության հիսնամյա հոբելյանի առթիվ իր գրած «Եղիշե պատրիարք Դուրյան» արժեքավոր մենագրության մեջ (Երևանում, 1932 թ., էջ 326) նրան բնութագրում է որպես գերազանց ուսուցչի և եկեղեցու մեծ վարդապետի, «որուն ամբողջական կյանքը նվիրված է եղել ժողովրդական դաստիարակության, եկեղեցական դաստիարակության» նվիրական գործին:

Դուրյանի կյանքի առաջին և մեծ փառքը կազմում է նրա ուսուցչությունը: Ուսավ ու ուսուց Սկյուդարի ճեմարանից, ապա Պարտիզանում, Արմաշում, Զմյուռնիայում, Կոս-

տանդնուպոլսում, Երևանում: Նրա շնչի տակ հասավ հոգևորականների և մտավորականների խոստումնալից մի սերունդ: Դուրյանը ուսուցչի և հոգևորականի իր պատկանուհի և հմայքը պահեց մինչև իր կյանքի վերջին օրը:

Եկեղեցու բեմը Դուրյանի համար հանդիսացել է «ուսուցանելու մի ուրիշ ամբիոն, հոգեկան դաստիարակության վարժոց, ուսկից հենդո ձայնը ավելի սրտերու մեջ պետք է արձագանքե»:

Դուրյանը մի ամբողջ շրջանի ուսուցիչն էր ու վարդապետը միանգամայն:

Ուսուցչական և հոգևորական այս գույգ ասպարեզներում Դուրյանը ներկայանում է մեզ ՆՎԻՐՅԱԼԻ և ԱՌԱՔՅԱԼԻ լուսավառով: Դուրյանը հոգով նվիրվեց հայ ժողովրդի մտավոր և հոգևոր շինության գործին: Այդ սրբազան աշխատանքի մեջ առանց մնացորդի նա դրել է իր սիրտը, անհկուն կամքը և հարուստ գիտելիքները:

ՍՈՎՈՐԵԼ ԵՎ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ. ահա Դուրյանի հոգու մշտական, կենդանի հրայրքը: Դուրյանը ժողովրդի ծառայության և Հայ եկեղեցու սպասավորության նվիրված մշակի և հոգևորականի սրտառույ մտատիպարն է: Այս իմաստով նա Արմաշի դպրեվանքը և Երևանում հայոց վանքը վերածեց բարոյական գաղափարական հաստատությունների: Նա ոչ միայն Արմաշի և Սաղիմական դպրոցների գլուխն էր, այլ մանավանդ հոգին:

Մեծ է նաև Դուրյանի փառքական, մատենագրական վաստակը և արժանի լուրջ գեղանատության: Նա մեր եկեղեցական գրականության, մատենագրության, բանասիրության տվել է մնայուն արժեք ներկայացնող աշխատություններ, որոնք նրա աշխատանքի արժեքն են հայ մշակույթի մեծ երախտավորների խմբին: Այդպիսի աշխատություններ են նրա գրադար լեզվի ուսուցման ձեռնարկները՝ «Ընթացիկ ի Բոց բարբառ» (Ա, Բ և Գ տարի), իրենց «Բերականական լուսաբանություններով, մեթոդի ավելի գործնական առավելություններով և առձեռն դասագրքի բոլոր մատչելիությամբ», որոնցով շատեր տիրապետել են մեր ուսկեղեցիկ լեզվին, «Պատմություն հայ մատենագրության»-ը, որտեղ «որքան խոր է իր տաղանդին ու գրչին, իր տեսությանց և մեթոդին ինքնությունը» (Քորգով արքեպիսկոպոս Դուրյանյան) հայ մատենագրության առաջին, հայ մատենագրության սկզբնավորության, զարգացման, գրերի գյուտի, հայերեն լեզվի ծագման և լեզվաբանական դիրքի և մեր մեծ մատենագիրների և նրանց երկերի վերլուծման հարցերում: Դուրյանի մատենագրական, բանասիրական վաստակի մեջ

առանձին արժեք են ներկայացնում նրա բըն-
նադատական աշխատություններն ու տեղե-
կագրերը՝ նվիրված Հայ Եկեղեցուն, հայ և
հույն եկեղեցական հարաբերությունաց, մա-
տենագրական և լեզվաբանական բազմաթիվ
հարցերին, որոնց մեջ հանդես է գալիս ող-
ջամիտ գիտնականը, պատմաբանը և մեծա-
հմուտ բանասերը:

Ուսուցչական իր երկարամյա դասախոսու-
թյանց և պրպտումների խղճամիտ արգա-
սիքը հանդիսացան նաև նրա մի շարք դասա-
գրքերը, «ուսուցչի գործը ամենեն ավելի
եռանդուն աղյուսակներով ամբողջ առաջ տա-
նելու համար», ինչպիսիք են «Ազգային պատ-
մություն»-ը, «Կրոնների պատմություն»-ը,
որը այդ միջոցին բոլորովին նորություն էր
հայ դպրոցներում «թե՛ իբր գիտություն և թե՛
իբր ուսուցում», ինչպես նաև «Հին կրոն հա-
յոց կամ Հայկական դիցաբանություն»-ը, մի
լուրջ ուսումնասիրություն, նվիրված հայկա-
կան հեթեոսության, հեթանոս Հայաստանի
մեհյաններին և նշանավոր դիմերին:

Իրավ հոգևորական, բազմավաստակ ուսու-
ցիչ ու բազմահմուտ գիտնական Դուրյան
սրբազանը նաև նույնքան իրավ բանա-
ստեղծ էր: 1873 թվականին նա, «տակավին
պատանի դեռահասակ», գրական ասպարեզ
է իջել ոչ միայն որպես «բանաստեղծ Պետ-
րոս Դուրյանի եղբայրը», այլ նաև որպես
նոր և շնորհավի բանաստեղծ:

Դուրյան սրբազանը ծնունդով բանա-
ստեղծ էր ինչպես իր եղբայրը՝ Պետրոս
Դուրյանը, և այդպիսին էլ մնաց նա «ամեն
տեղ», իր կյանքի և գործունեության բոլոր
բնագավառներում, «իբր մշակույթի բոլոր գի-
ծերուն վրա և բոլոր անկյուններուն մեջ՝
ան նույնն է միշտ, բանաստեղծը՝ նախ և
ամենեն ավելի» (Թորգոմ արքեպիսկոպոս
Դուրյակյան):

Բանաստեղծ Նիկոլե Դուրյանի ֆերթոյա-
կան առաջին վաստակը նախ 1909 թվակա-
նին հրատարակվել է Զմյուռնիայում «Հով-
վական սրինգ» վերնագրի տակ: Այս 1936
թվականին Երուսաղեմում տպված «Սրբազան
հեռ»-ում ամփոփվել է նրա ինքնագիր և
թարգմանած բանաստեղծական վաստակը:

«Հովվական սրինգ»-ը բնադատության
կողմից ժամանակին ընդունվեց շեմոնեան և
գնահատվեց որպես «հայտնություն» իր
հոգևոր և կրոնական նկարագրով մեր կրո-
նական նոր պոեզիայի բնագավառում, «իբր
իմացական և բարոյական կյանքի հովիտնե-
րուն մեջ, իր հոգիին սնունդը փնտռող ֆրիս-
տոնյա բանավոր հոտի մը ուղղված և ազնե-
րական հովվի մը եղանակված»:

Արդարև, Դուրյան սրբազանը իր բովան-
դակ կյանքում, և՛ ամեն տեղ և՛ ամեն տա-

րադի տակ, նախ հոգևորական է եղել: Նա
մեծ էր նաև որպես հոգևոր-բարոյական
բարձր նկարագիր: Հայ ժողովուրդը, միշտ
հարգալից վստահությամբ, Դուրյանի բազ-
մաշնորհ անձնավորության և այլազան ձի-
րերի տակ տեսել, գնահատել և պատվել է
մանավանդ հայ հոգևորականը, որը, իրա-
կան, շոշափելի ծառայություն է մատուցել
իր եկեղեցուն և ժողովրդին, անվերապահո-
րեն արժանացել է համատարած հարգան-
քի, որպես պարկեշտ և ազնիվ մարդ և մա-
հուր հոգևորական, որովհետև նա ունեցել է
ուսուցչական ասպարեզի և հովվական կոչ-
ման նվիրականության հատուկ զգացմուն-
քը:

Դուրյան սրբազանը խորունկ սիրով և
պաշտամունքով սիրել է Հայ եկեղեցուն,
որպես հայ ժողովրդի միության և պահպա-
ման միջնաբերդը, հայ ազգային դիմագծու-
թյան պահպանը, մեր ժողովրդի տոն-
մային առաքինության և ազգային նկարա-
գրի ներշնչաբանը:

Հոգևորականի կոչումը և ուխտը սրբազան
երդում էր նրա համար՝ ծառայելու հայ ժո-
ղովրդին և Հայ եկեղեցուն:

Եվ Դուրյան սրբազանը չի դրժել իր հո-
գևորական ուխտը և իր պարտքը հատուցել
է հայ ժողովրդին և Հայ եկեղեցուն: Դրանով
նա արժանավորապես դարձել է գաղափա-
րական, նշմարիտ արժանիքների տեր մար-
դը, մտքի և սրտի շնորհներով զարդարված
հոգևորականը, «մեր օրերու Շնորհալին,
սիրված, հարգված բոլորեն»,—ինչպես
նշում է Վեհափառ Հայրապետը:

Հայ եկեղեցու հանդեպ Դուրյան սրբազա-
նի պաշտամունքը և հայ հոգևորականի գի-
տակցությունը բարձրացրին նրան:

1929 թվականին, Երուսաղեմում, իր հո-
բեյանական հանդիսությունների ժամանակ,
Դուրյան սրբազանն ասել է.

«Իհարկե պիտի չգարմանաք, եթե ըսեմ,
թե հուզված եմ խորապես... և ավելի պիտի
ընտրեի լույս ու խոկալ, քան թե խոսիլ: Բայց
որովհետև կվախեմ կտաք մը ըլլալեմ, պետք
է որ շրթունքներս շարժին:

Իմ հիսնամյա ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆՍ հոբել-
յանն է միայն որ կկատարվի այսօր, և եթե
ուրիշներ տարբեր արժանիքներ ալ տեսան
անձիս վրա, այդ իմ ուզածս չէր: Ես հավա-
նեցա այս հանդիսավորության, ո՛չ թե ինք-
զինքս փառավորելու, այլ՝ միջնորդաբար՝
առիթ մը ընծայած ըլլալու համար ամեն ա-
նունց, որ կսիրեն իրենց եկեղեցին, և նա-
խանձալնդիր են պատվելու անոր մեկ պաշ-
տոնյան, որ իր պարտքը կատարած է լույս:
Գիտեմ՝ թե Հայ եկեղեցիին համար կարևոր
ծառայություններով ապրող մարդեր չեն

պակսիր մեր մեջ, քեկ չեն ունեցած հոբելյանի մը արժանանալու բախտը: Տարիներու որոշ քիվի մը հետ կապ չունի այդ փառավորումը. ծառայության արժեքին մեջ կկալանա վարձը: Ես այդ բախտավորությունը ունենալով այս պահուս՝ չեմ նկատեր սակայն, քե ինձի ուղղված ըլլան ժողովրդային համակրանքի այս բոլոր ցույցերը, ծափ ու գովեստ, այլ այդ ամենը կուղեբռնէին Հայ Եկեղեցիին, որ ամենուս Մայրն է եղած, որ իր կաթը խմցուցած է մեզի ու պահած է մեր գոյությունը: Անո՛ր կպարտիմ իմ արժանիքս, երբ ունիմ, և վարդապետական կամ վարժապետական պաշտոնիս մեծ մասը անով է արդյունավորված:

...Իմ տկար ուժերս պիտի պահեմ Հայ Եկեղեցիին համար, երբեմնի ծիրանագգեստ այն 'Դշտային' որ հիմա ցնցոտիներ է հագած: Ան կսպասե իր բոլոր զավակներեն հավատքի և անձնուրացության փոխարինություն մը: Սիրեցեք զայն, սրբվեցեք անով, ու անոր մեծության գանձերուն մեջ պիտի գտնեք ձեր հոգեկան հարստությունը, պատրաստ ըլլալով, երբ հարկ ըլլա, պատռելու ձեր պատմութեանները և անոնց լավագույն կտորներովը վերստին հագվեցնելու և զարդարելու բովանդակ հայության այդ սգավոր ու դժբախտ Մայրը»:

Դուրյան սրբազանը իր պատվական անձով և անձնուրաց կյանքով փառավորեց

Հայ Եկեղեցուն: Իր բովանդակ պաշտոնավարության ընթացքում ամեն տեղ սեր ու հարգանք գտավ իր անձի հանդեպ և իր գործունեության ոգին հատկանշող ուղղամտության մասին, և՛ բարձրորեն և՛ արդար կերպով գնահատվեց քե՛ ժողովրդից, քե՛ իր աշակերտներից, քե՛ իր գրչի և ասպարեզի ընկերներից, և սիրվեց քե՛ իր կենդանության տարիներին և քե՛ մահից հետո:

Դուրյան սրբազանը իր ետին բողել է լուսավոր, շոշափելի հետք և պայծառ հիշատակ:

Երախտագետ սրտերի խորումն է Դուրյան սրբազանի հիշատակը: Նա ապրում է, կապրի ընդմիշտ՝ իր անվան հմայով, իր վաստակով և մանավանդ իր նկարագրով ու շունչով՝ զալիք սերունդների սրտերում:

Դուրյանը, որպես տիպար հոգևորական, պատմության է պատկանում:

Օրհնությո՛ւն բարի հիշատակին Դուրյան սրբազանի, որ հիսուն տարի, իր իսկ բառերով ասած, «սրբազան բեմերե ավետաբանական հավատքը փարոզեց մեր Եկեղեցիի զավակներուն և նույնչափ ու ավելի տարիներով սուրվեցուց աննախանձաբար, դասարանական արձուներու վրա»:

Դալիք հայ հավատավոր սերունդների սրտի և հիշողության մեջ անշեշ լուսապսակով կհանդակվի Դուրյան ուսուցչի և հոգեվորականի սրտառուչ պատկերը:

